

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԹՎԱՅԻՆ զրագիտություն և համակարգչային գիտություն (ինֆորմատիկա)

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները և առաջադրանքներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակներ՝ *ընտրովի պատասխանով* առաջադրանքներ և *կարճ պատասխանով* առաջադրանքներ:

- ❖ Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:
- ❖ Կարճ պատասխանով առաջադրանքները հետևյալ տեսակների են.
 - տրվում են 7-ական տարբերակներ, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում: Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համապատասխանող բոլոր համարները:
 - առաջադրանքներ, որոնց պատասխանները ոչ բացասական թվեր են: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր: Այս

առաջադրանքին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝
առանց չափման միավորը նշելու:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ
ԱՂՅՈՒՍԱԿ**

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդհանուր	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

➤ **ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ.**

Microsoft Word-ում տեքստի ուղղագրությունն ու քերականությունը ստուգելու համար անհրաժեշտ է ընտրել հետևյալ հրամանը՝

1. Track Changes
2. Show Markup
3. Spelling & Grammar
4. Ignore All

➤ **ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ.**

1. Քանի՞ ՄԲայթ է պարունակում 2³¹ Բիթը:

Պատասխան՝ _____

2. k փոփոխականի ի՞նչ արժեք կարտածվի C++ ծրագրավորման լեզվով գրված հետևյալ ծրագրի կատարման արդյունքում, եթե n=20:

```
#include <iostream>
using namespace std;
int main ()
{
    int n,i,k;
    cout<<"n=";
    cin>>n;
    k=0;
    for(i=1;i<=n;i++)
        if(n%i==0)
        {
```

```

++k;
}
cout<<"k="<<k<<endl;
}

```

Պատասխան՝ _____

3. Ո՞ր պնդումներն են ճիշտ: (1 միավոր)

1. CSS-ում ֆոնի պատկերը միայն ուղղահայաց ուղղությամբ կրկնելու համար անհրաժեշտ է background-image հատկանիշից հետո ավելացնել background-repeat: repeat-x; հրահանգը:
2. CSS-ում background-attachment հատկանիշը հնարավորություն է տալիս ֆոնի պատկերն անշարժացնել WEB-էջում:
3. CSS-ում կարելի է մեկնաբանություններ ավելացնել [] պայմանանշանների օգնությամբ:
4. CSS-ում ընտրիչին հաջորդող {...} ձևավոր փակագծերում ընդգրկվում են ոճը ներկայացնող կանոնները՝ բաժանված կետ-ստորակետերով (,):
5. CSS-ում text-align հատկանիշը հնարավորություն է տալիս սահմանել տեքստը գունավորելու եղանակը:
6. CSS-ում letter-spacing հատկանիշը հնարավորություն է տալիս սահմանել տողերի միջև ցանկալի հեռավորությունները:
7. CSS-ում տարրի չափերի width և height հատկանիշների համար որպես չափման միավոր կարելի է կիրառել px, %, cm:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» և «Ինֆորմատիկա» առարկաների հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների «Թվային գրագիտության և համակարգչային գիտություն» և «Ինֆորմատիկա» առարկաների չափորոշիչներ և առարկայական ծրագրեր:
2. «Թվային գրագիտության և համակարգչային գիտություն» 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ դասարանների համար գործածության երաշխավորված դասագրքեր:
3. «Ինֆորմատիկա» 12-րդ դասարանի դասագիրք:

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: